

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ. դեկտեմբերի 29-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 36-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. **Գիտական հաղորդում (զեկ.՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոն):**
2. **Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ս.Մեղրյան):**
3. **Հաղորդում 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի մասին:**
4. **Ֆակուլտետի կարիերայի կենտրոնի տարեկան հաշվետվությունը (զեկ.՝ պրոֆ. Ս.Առաքելյան):**
5. **Ընթացիկ հարցեր**

1. **ԼՄԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոն):**
Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ավետիսյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթացի վերաբերյալ: Զեկուցողը հատուկ ընդգծեց, որ ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի գրեթե բոլոր դասախոսները Եվրոպայի խորհրդի փոձագետի կարգավիճակով ընդգրկված են այս գործընթացում և իրենց զգալի ներդրումն ունեն ծրագրի իրականացման մեջ: Վ.Ավետիսյանը տեղեկացրեց, որ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու մասին օրենքի նախագիծը մշակելուց առաջ համապատասխան փորձագետների կողմից մշակվել և եվրոպայի խորհրդի եվրոպացի փորձագետների կարծիքին են ներկայացվել քաղաքացիական օրենսգրքի առանձին բաժիններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին շուրջ 16 հայեցակարգեր, որոնք ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծված համապատասխան հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո, սկսվել են այդ բաժիններում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին օրենսգրքի փոփոխությունների նախագծերի մշակման աշխատանքները: Ներկայացված հայեցակարգերով առաջարկվել է փոփոխություններ և լրացումներ կատարել իրավաբանական անձանց, իրային իրավունքի, մտավոր սեփականության, միջազգային մասնավոր իրավունքի, գրավի իրավունքի, անհիմն հարստացման, վնաս պատճառելուց բխող պարտավորությունների, ժառանգման իրավունքի, սեփականության իրավունքի,

ամուսինների համատեղ սեփականության, էլեկտրոնային առևտրի, հարևանային իրավունքի, բնակելի տարածության օգտագործման, կառուցապատման իրավունքի և քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող մի շարք բաժիններում և նորմերում, և ներկա փուլում օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի ձևով հանրային քննարկման են ներկայացված վնաս պատժառելուց բխող պարտավորություններին, տիրապետման, հարևանային և իրային իրավունքին վերաբերող օրենքի նախագծերը:

Ավարտելով զեկույցը՝ Վ.Ավետիսյանը հատուկ անդրադարձավ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթացի համակարգման ոլորտում առկա թերություններին: Մասնավորապես, զեկուցողը նշեց, որ այս բուն գործընթացից անկախ պարբերաբար փոփոխություններ և լրացումներ են կատարվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, որոնք հակասում են մշակված հայեցակարգային մոտեցումներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Ղազինյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաղորդումը կցվում է):

2. ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ս.Մեղրյան):

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ դոց. Ս.Մեղրյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում՝ 01.10.2014-ից մինչև 29.12.2015-ը, իր ղեկավարած ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին: Իրականացված գիտահետազոտական աշխատանքների մասով՝ ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի անդամները հրատարակել են թվով 3 մենագրություն և 24 գիտական հոդվածներ, ամբիոնի անդամներ պրոֆ. Ա.Իսկոյանի, դոց. Գ.Պետրոսյանի, պրոֆ. Վ.Հովհաննիսյանի և ամբիոնի վարիչ դոց. Ս.Մեղրյանի գիտական հոդվածները հրապարակվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 80-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի անգլերենով պատրաստված ժողովածուի շրջանակներում: 2014 թվականի դեկտեմբերին ամբիոնի պրոֆ. Ա.Իսկոյանը զեկուցմամբ հանդես է եկել ֆակուլտետում կազմակերպված՝ Ա.Եսայանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովին, 2015 թվականի դեկտեմբերին ֆակուլտետում կազմակերպված՝ ՀՀ Սահմանադրության 20-ամյակին նվիրված գիտաժողովին զեկույցներով հանդես են եկել ամբիոնի վարիչ Ս.Մեղրյանը և ամբիոնի անդամ դոց. Գ. Պետրոսյանը, իսկ ամբիոնի ևս 5 անդամներ գիտական հոդվածներ են ներկայացրել գիտաժողովի նյութերի ժողովածուի մեջ ներառելու համար: Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վ.Դալլաքյանը զեկուցմամբ հանդես է եկել ԱՊՀ և Բալթյան երկրների 25-ամյակին նվիրված «Եվրասիական քաղաքացիական դատավարություն» թեմատիկայով Մոսկվայում կազմակերպված գիտաժողովին՝ «Քաղաքացիական դատավարության զարգացումը Հայաստանի Հանրապետությունում սկսած 1990 թվականից» վերաառությամբ զեկուցմամբ, որը հրատարակվել է համապատասխան գիտաժողովի նյութերի շրջանակներում: 2015

թվականի նոյեմբեր ամսին ամբիոնին կից գործող Էկոլոգիական իրավունքի կենտրոնը՝ ամբիոնի պրոֆ. և կենտրոնի ղեկավար Ա.Իսկոյանի ղեկավարությամբ մասնակցել է ՀՀ ԳՊԿ կողմից հայտարարված գիտական թեմաների ֆինանսավորման մրցույթին՝ ներկայացնելով «Էկոլոգիական տեղեկատվության իրավական ասպեկտները. օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները և հեռանկարները ՀՀ-ում» վերատառությամբ հայտ, որը Կոմիտեի որոշմամբ ֆինանսավորվել է 2 տարի ժամկետով: Անդրադառնալով նոր կադրերի պատրաստման և ասպիրանտների (հայցորդների) հետ տարվող աշխատանքներին՝ Ս.Մեղրյանը նշեց, որ հաշվետու տարում ամբիոնի թվով երեք ասպիրանտ-հայցորդներ պաշտպանել են իրենց թեկնածուական ատենախոսությունները, իսկ ներկայումս ամբիոնն ունի 1 առկա, 4 հեռակա ասպիրանտ և 5 հայցորդ: Ընթացիկ ուսումնական տարում ամբիոնը պլանավորում է կազմակերպել ամբիոնի նախկին ասպիրանտ և Էկոլոգիական իրավունքի կենտրոնի գիտաշխատող Հեղինե Հախվերդյանի, ինչպես նաև ամբիոնի հայցորդ Հայկ Հովհաննիսյանի ատենախոսությունների պաշտպանությունը: ՈւԳԸ-ի և ուսանողների հետ տարվող աշխատանքների մասին ամբիոնի վարիչը նշեց, որ 2015թ. ապրիլի 29-ից 30-ը տեղի ունեցած ԵՊՀ ՈՒԳԸ տարեկան գիտական նստաշրջանին Քաղաքացիական դատավարության ամբիոնից ներկայացվել են 4 գիտական զեկույց, որոնցից մեկը երաշխավորվել է տպագրության, ամբիոնի դասախոս Պ.Թադևոսյանը հուլիսի 5-12-ը Չեխիայի Օլումունդ քաղաքում ֆակուլտետի ուսանողների հետ մասնակցել է «Բժշկական իրավունք» թեմատիկայով ամառային դպրոցին, որտեղ հանդես է եկել զեկուցմամբ, ամբիոնի դասախոսներ Վ.Գրիգորյանը և Պ.Թադևոսյանն ակտիվորեն մասնակցել են 2015թ. ապրիլին Ամերիկյան համալսարանում կազմակերպված «Արբիտրաժ» դատախազ-մրցույթի նախապատրաստական աշխատանքներին, 2015թ. մարտի 2-6 ՈՒԳԸ-ի հետ համատեղ, «Իրավաբանական հմտություններ» խորագրով ծրագրի շրջանակներում, ամբիոնի դասախոս Վ.Գրիգորյանը կազմակերպել է գործնական աշխատանքներ՝ քաղաքացիաան դատավարությունում հայցադիմումներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, միջնորդություններ և այլ դատավարական փաստաթղթեր կազմելու մասնակիցների հմտությունները խորացնելու նպատակով:

Ս.Մեղրյանը տեղեկացրեց, որ ամբիոնի քաղաքացիական դատավարության գծով մասնագիտացած գրեթե բոլոր անդամները որպես ազգային փորձագետներ ընդգրկված են ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ձևավորված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման և անհրաժեշտ օրենսդրական փաթեթի նախապատրաստման աշխատանքային խմբում: Ամբիոնի վարիչը նշեց նաև ամբիոնի առանձին անդամների մասնակցությամբ Նիդերլանդներ և Գերմանիա կատարված ուսումնական այցերի մասին: Զեկուցողը նաև հավելեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում շարունակվել են նոր ուսումնական և ուսումնաօժանդակ գրականության մշակման ուղղությամբ աշխատանքները: Ս.Մեղրյանը հատուկ անդրադարձավ նաև ամբիոնին կից գործող Էկոլոգիական իրավունքի կենտրոնում ամբիոնի պրոֆ. Ա.Իսկոյանի ղեկավարությամբ կազմակերպված միջոցառումներին և իրականացվող ծրագրերին: Զեկուցողը նշեց, որ կենտրոնի աշխատակիցները ներգրավված են նաև շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտին վերաբերող տարբեր իրավական ակտերի մշակման գործընթացներին: Էկոլոգիական իրավունքի կենտրոնի աշխատակիցները (պրոֆ. Ա.Իսկոյան, Հ.Հախվերդյան) սույն թվականի դեկտեմբեր ամսին Շվեյցարիայի Ժնև քաղաքում մասնակցությունն են ունեցել Օրհուսի կոնվենցիայի

Տեղեկատվության ազատության հարցերով Նպատակային խմբի 4-րդ և Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի 51-րդ հանդիպումներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվավորությունը գնահատել դրական:

3. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի մասին:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանն ներկայացրեց ընդհանուր բնույթի տեղեկություններ 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և նախնական որոշ արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի կարիերայի կենտրոնի տարեկան հաշվետվությունը (զեկ.՝ պրոֆ. Ս.Առաքելյան):

Ֆակուլտետի կարիերայի կենտրոնի տնօրեն պրոֆ. Ս.Առաքելյանը ներկայացրեց կենտրոնի իրականացրած աշխատանքները: Զեկուցողը հատուկ ընդգծեց, որ կարիք կա միջոց ձեռնարկել կենտրոնի գործունեությունն արդյունավետ դարձնելու համար: Ս.Առաքելյանը, մասնավորապես, նշեց, որ լուրջ խնդիրներ կան աշխատաշուկայի մոնիտորինգ իրականացնելու, պետական կառույցների հետ մշտական կապեր հաստատատելու առումով, իսկ այս խնդիրների լուծումը լուրջ աշխատանք է պահանջում: Մինևս ժամանակ հաշվի առնելով իր զբաղվածությունը՝ Ս.Առաքելյանը բարձրացրեց նաև իր հնարավոր փոխարինման և կարիերայի նոր տնօրենի ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Ս.Ղազինյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. Ընթացիկ հարցեր

5.1 ԼՍԵՑԻՆ. TEMPUS ծրագրի հետ համագործակցության շրջանակներում ԵՊՀ-ի կողմից մշակված՝ բակալավրիատում և մագիստրատուրայում կրթական վերջնարդյունքների վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների ներկայացման հետ կապված հարց:

Ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ, դոց. Ա.Մարգարյանը տեղեկացրեց, որ TEMPUS ծրագրի հետ համագործակցության շրջանակներում մշակված՝ բակալավրիատում և մագիստրատուրայում կրթական վերջնարդյունքների վերաբերյալ փաստաթուղթը ներկայացվել էն ամբիոններին՝ առաջարկներ և դիտողությունների ներկայացնելու համար, սակայն գրավոր առաջարկներ ներկայացրել է դեռևս միայն Սահմանադրական իարվունքի

ամբիոնը: Դոց. Ա.Մարգարյանը հատուկ ընդգծեց փաստաթղթի կարևորությունն այն առումով, որ դրանով փորձ է արվել մշակելու կրթական գործընթացի վերջնարդյունքում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներից պահանջվող հմտությունների և գիտելիքների շրջանակը որոշելու չափանիշները: Հաշվի առնելով, որ ԵՊՀ-ի կողմից փաստաթուղթը վերջնական տեսքով 2016 թվականի հունվարի ամսվա վերջին ներկայացվելու է ՀՀ ԿԳՆ, Ա.Մարգարյանը կարևորեց մինչև հունվար ամսվա կեսը ամբիոնների կողմից գրավոր առաջարկներ ներկայացնելը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ամբիոններին հանձնարարաբեկ ամանորյա և սուրբծննդյան տոներից հետո առաջիկ մեկ շաբաթվա ընթացքում պատրաստել գրավոր առաջարկներ և ներկայացնել դրանք ղեկնաստի նիստում քննարկելու համար:

5.2 ԼՍԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ֆակուլտետի շրջանավարտ Ռոզա Աբաջյանին ամբիոնում հայցորդ ձևակերպելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազիսյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Բավարարել Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ֆակուլտետի շրջանավարտ Ռոզա Աբաջյանին ամբիոնում հայցորդ ձևակերպելու մասին՝ հաշվի առնելով, որ Ռ.Աբաջյանն ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը և մագիստրատուրան, ներկայումս աշխատում է ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալի աշխատակազմում որպես փորձագետ:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.3 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Նունե Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուրյանը, պրոֆ. Ս.Առաքելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Նունե Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Պրոբացիոն ծառայության ներդրման և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Տ.Միմոնյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.4 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Լիանա Եղիգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուրյանը, պրոֆ. Ս.Առաքելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Լիանա Եղիզարյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը ՀՀ-ում. տեսական և գործնական հիմնախնդիրներ» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրմինոլոգիա, քրեակատարողական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ս.Առաքելյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.5 ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գարիկ Խուրդյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը, ղեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գարիկ Խուրդյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության իրավական հիմնախնդիրները» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Ստեփանյանին:

5.6 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Սոնա Թևանյանի՝ «Կոնցեսիայի պայմանագրի իրավական կարգավորումը» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելումասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ Սոնա Թևանյանի՝ «Կոնցեսիայի պայմանագրի իրավական կարգավորումը» վերտառությամբ մենագրությունը շարադրված է պատշաճգիտական մակարդակով, երաշխավորել այն հրատարակության:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուլջան